



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92  
Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019 թ.

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի  
«Հետք» թերթի լրագրող  
Գրիշա Բալասանյանին

Հարգելի պարոն Բալասանյան

Ի պատասխան Ձեր 25.11.2019թ. տեղեկատվական հարցմանը.

Տեղեկացնում եմ, որ ՀՀ Լոռու մարզպետարանի և «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի միջև կնքվել է պայմանագիր ՀՀ Լոռու մարզպետարանի ջրամատակարարման և ջրահեռացման վերաբերյալ, որի շրջանակներում ՀՀ Լոռու մարզպետարանը մշտապես և պարտաճանաչ կարգով իրականացրել է իր պայմանագրային պարտականությունները:

2018թ. հոկտեմբերին «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի վերահսկողական ծառայության կողմից իրականացվել է ստուգում և հայտնաբերվել «առևտրային հաշվառքի սարքի» խախտում, որի հիման վրա կազմած արձանագրությամբ ՀՀ ՀԾԿՀ 30.11.2016թ.թիվ 378-Ն որոշման համաձայն, կատարված խախտման համար հաշվարկվել է 1 687 781 դրամի տուգանք:

Նշված ենթադրյալ խախտման վերաբերյալ մեր կողմից ներկայացվել են հիմնավոր առարկություններ, ինչպես նաև առաջարկվել է համատեղ քննարկումներ կազմակերպել կամ ՓԲԸ-ում ու մարզպետարանում, կամ՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում, կամ՝ հարցը լուծել դատական կարգով:

Տեղեկացնում եմ, որ մեր առաջարկություններից ոչ մեկը չի ընդունվել ՓԲԸ-ի կողմից, իսկ նրանց կողմից 2 անգամ դատական հայց է ներկայացվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան, որը հետ է վերադարձվել տարբեր պատճառներով: Հետագայում, նոր ներկայացված հայցադիմումով վարույթի վերաբերյալ դուք կարող եք տեղեկանալ կամ՝ պաշտոնական տեղեկատվությունից, կամ՝ Լոռու մարզպետարանից:

Ինչ վերաբերվում է Ձեր հարցման 2-րդ կետին, տեղեկացնում եմ, որ Լոռու մարզպետարանը ոչ մի կազմակերպության նկատմամբ որևէ չկատարված պարտավորություն չունի:

Հարգանքով՝

 Invalid signature

X 

ԱՆՂԻՅՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Կառ Ս. Մակարյան